

Երաշխավորվել է տպագրության Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի կողմից

Մանկավարժության և հոգեբանության հիմնական խնդիրներ,
Մ 261 – Եր.: «Չանգակ-97» հրատ., 2008 թ., 176 էջ:

Միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական պարբերականը միտված է նպաստելու Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մանկավարժական կրթական համակարգի բարելավմանը և առաջընթացին: Պարբերականում կգերեզվեն գիտատեսական և գիտամեթոդական բնույթի հոդվածներ, որոնք կօժանդակեն մանկավարժության և հոգեբանության բնագավառների առջև ծառայած խնդիրների լուծմանը, կրթության կառավարման հիմնախնդիրների լուսարանմանը, համաշխարհային փորձի ուսումնասիրմանը և միջազգային կրթական գործընթացների առաջադրած դրույթների համակարգված և միասնական ներդրմանը:

Գիտական պարբերականը նախատեսված է մանկավարժների, հոգեբանների, բարձրագույն կրթության համակարգում աշխատողների և առհասարակ մանկավարժահոգեբանական գիտությունների զարգացմանը շահագրգիռ յուրաքանչյուրի համար:

ԳՄԴ 74+88

ISBN 978-99941-1-440-5

© Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ԳԱՄԱԼՍԱՐԱՆ, 2008 թ.
© «ՉԱՆԳԱԿ-97», 2008 թ.

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻՈՒԵՏՏԱ

Յանգային օրագրերի օգտագործումը ռուսաց լեզվի դասավանդման կոլեկտիվ միջոցի տեսանկյունից 103

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎՈՐՅԱՆ ՆԱԻՐԱ, ՍԱՐԳՎՅԱՆ ՎԱՀԱՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐԻ

Մանկավարժների բարոյստեղծական մտածողության զարգացումը ինքնավարակ վարքի և սոցիալական հմտությունների մարզման միջոցով 107

ՔԵՐԲԵՐՅԱՆ ԱՍՅԱ

Օտարերկրյա ուսանողների հաղորդակցման կոմպերենկություն մակարդակի ուսումնասիրությունը ուսումնա-պրոֆեսիոնալ գործունեության ադապտացիայի ժամանակ 116

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ

Երեխայի դպրոցական կրթության նախապատրաստման մի շարք արդիական հարցեր 123

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՎԻԹ

Շախմատային հոգեբանության կիրառական հիմնախնդիրները 129

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԱՌԻՐԱ

Միջանձնային ընկալման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում 134

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ

Հաղորդակցման առանձնահատկությունները դեռահասության շրջանում 141

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՄՅԱՆԻԿ

Խրիմյան Հայրիկը որպես մանկավարժ 147

ԱԹՈՅԱՆ ՎԱՐԳԱՆ

Տարոնական շարժման պատմությունը 156

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԵԼԼԻ

Ռուբեն Զարդարյանի քննադատական հայացքները 164

ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱԻՐԱ

Երկլեզվություն. հոգելեզվաբանական տեսանկյուն 168

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՎԻԹ

Երևանի պետական համալսարանի ռեկտորի օգնական
Հոգեբանական գիտությունների թեկնածու

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոգիվածը նվիրված է շախմատային խաղի և շախմատիստի անձի հոգեբանական ուսումնասիրման կիրառական հիմնախնդիրների քննարկմանը 19-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը: Ինչպես նաև ներկայացված են այս ոլորտի ժամանակակից մարտահրավերները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ շախմատային ոճ, շախմատիստի կողմից որոշման ընդունում, շախմատիստի անձ, փակ աչքերով խաղ:

Շախմատը հնագույն ինտելեկտուալ խաղ է, որն ունի բազմադարյան պատմություն: Այժմ այն ամենատարածված սեղանային խաղերից է և իր մեջ է ամփոփում սպորտի, գիտության և արվեստի տարրեր: Շախմատն ունի նաև դաստիարակչական նշանակություն. օգնում է անձի կայացմանը, սովորեցնում տրամաբանորեն մտածել և պլանավորել սեփական գործողությունները, զարգացնում է ուշադրության կենտրոնացվածությունը: Շախմատային խաղի ժամանակ արտահայտվում են անձնավորության բազում առանձնահատկություններ, ահա թե ինչու այն հաճախ հոգեբանական գիտական հետազոտությունների մոդել է ծառայում:

Շախմատը անձի մտածողության տեսանկյունից բավականին բարդ խաղ է, քանի որ հնարավոր լուծումների համադրությունը 10-ից 120 աստիճանի է հասնում, միևնույն ժամանակ ձևական տեսանկյունից բավականին հեշտ է կառուցել այդ լուծումների որոնման մոդելը, քանի-որ յուրաքանչյուր ֆիգուր ունի որոշակի ճշգրիտ կշիռ, քայլերի հստակ կանոնակարգվածություն և օրենքների պարզ համակարգ [1,4,5]:

Սակայն առաջին և, ըստ մեզ, ամենակարևոր յուրահատկությունն այն է, որ շախմատի և հոգեբանության կապը պետք է դիտարկել որպես մեկ ամբողջական, երկկողմանի փոխազդեցության գործընթաց:

1. Գիտական հոգեբանական հետազոտությունների անցկացման ժամանակ շախմատային մոդելի կիրառումը անձի կոգնիտիվ առանձնահատկությունների և օրինաչափությունների ուսումնասիրման համար:
2. Կիրառական հոգեբանության տվյալների ներմուծումը շախմատային մարզումների ոլորտ մարզիկների պատրաստակամության, ինքնակարգավորման, որոշման ընդունման արդյունավետության բարձրացման համար:

Այժմ առավել մանրամասն անդրադառնանք մեր կողմից առաջ քաշված այս երկու դրույթներին՝ դրանք վերլուծելով պատմական զարգացման տեսանկյունից:

Հոգեբանական հետազոտություններում շախմատային մոդելի կիրառման ոլորտի առաջին հետազոտությունները կատարեց Ա. Բինեն, որի հիմնական ձեռքբերումներից մեկը կարելի է համարել այն փաստի փորձարարական ապացույցը, որ շախմատային խաղը չի կարող հանգեցվել լավ հիշողությանը: Հնարավոր չէ ռացիոնալ հնարներով բացատրել շախմատային ստեղծագործությունը:

Դեռևս 19-րդ դարի ավարտին Ա. Բինեն, ի հակադրություն Հալտոնի անթրոպոմետրիկ և Գերմանիայի փորձարարական լաբորատորիաների մոտեցումներին, որոնք հոգեկանի ուսումնասիրման հիմնական շեշտադրումը դնում էին պարզ

զգայաշարժողական հակազդումների չափման վրա, ապացուցեց, որ պետք է ուսումնասիրել բարձրագույն կոզմիտիվ հմտությունները, որոնք առավել վառ դրսևորվում են շախմատում:

Նա գրում է. «Եթե երբևիցե որևէ մեկը ցանկանա հետազոտել երկու անհատների միջև եղած տարբերությունները, անհրաժեշտ է սկսել ամենաբարդ և ինտելեկտուալ գործընթացներից» (R. Smith, 1997, p. 591):

1894թ.–ին Ա. Բինեն սկսում է ուսումնասիրել փակ աչքերով խաղը: Նա հետաքրքիր տվյալներ է ստանում, որոնք թույլ են տալիս եզրահանգել, որ շախմատիստի տեսողական պատկերացումները առավելապես իմաստային բնույթ են կրում:

Հետագայում շախմատային մտածողության հիմնախնդիրների պարզաբանման հարցում մեծ ներդրում ունեցավ սպորտի վարպետ, հոգեբան Բ. Բլյունենֆելդը: Նա ապացուցեց, որ շախմատիստն օգտագործում է մտածողության 2 տեսակ՝ սխեմատիկ և ասոցիատիվ: Ասոցիատիվ մտածողության արդյունավետությունը արտաքինից տարբեր նմանությունները նկատելը և մեկ ամբողջի մեջ միավորելն է: Նրա հետազոտություններում կենտրոնական տեղ են գրավում ինտուիցիայի գործընթացի ուսումնասիրությունները [2, 4]:

1925թ.–ին առաջին անգամ մոսկովյան միջազգային մրցաշարի ժամանակ մասնակիցները ենթարկվեցին հոգեբանական թեստավորման, որի արդյունքում Ի. Դյակովը, Ն. Պետրովսկին, Պ. Ռուդիկը իրենց անցկացրած հետազոտությունների մասին աշխատություն հրատարակեցին՝ ներկայացնելով շախմատիստի «հոգեգրաման»: Նրանում տեղ գտան տասնվեց անձնային հատկություններ, որոնք պայմանավորում են խաղում հաջողության հասնելը: Նրանցից առանձնացնենք միայն մի քանի հատկություններ՝ ֆիզիկական ուժերի և առողջության մեծ պաշար, ուշադրության հավասարաչափ բաշխում, մտածողության առարկայական և օբյեկտիվ բնույթ և համադրական ուժ, հույզերի և աֆեկտների ղեկավարում, ինտելեկտուալ գործընթացների բարձր ակտիվություն [2]:

Ամերիկյան գրոսմայստեր Ռ. Ֆայնը իր «Շախմատիստի հոգեբանությունը» գրքում քննարկում է շախմատային ստեղծագործական աշխատանքը Չ. Ֆրոյդի տեսանկյունից և շախմատային վարպետության զարգացումը բացատրում է «արտամոդված» բնագոյներով և հոգեվերլուծական այլ հասկացություններով:

Մինչ օրս ապացուցվել է նաև այն, որ շախմատիստը քայլի շուրջ մտորելու ընթացքում քննարկում է բոլոր հնարավոր քայլերը, սակայն, ընդունելով որոշում, որպես կանոն, միշտ կարող է ապացուցել, որ իր կատարած քայլը ամենաարդյունավետն է: Այսպիսով, շախմատիստը խնդրային բնույթի իրավիճակում, որտեղ համարյա ամեն կատարված քայլ պահանջում է ստեղծագործական լուծում, հաճախ կատարում է ընտրություն՝ օգտագործելով էվրիստիկ հնարներ [3]:

Ինչ վերաբերում է մարզիկների պատրաստականության, ինքնակարգավորման, որոշման ընդունման արդյունավետության բարձրացման համար կիրառական հոգեբանական գիտելիքների ստացման և ներմուծման հիմնախնդիրներին, ապա այստեղ անհրաժեշտ է նշել, որ դրա կարևորությունը նախ և առաջ զգացել են հենց շախմատիստները:

Է. Լասկերն առաջինն էր, ով իրապես գնահատեց, որ շախմատային ֆիզիկոսների կյանքի հետևում թաքնված է մարդն իր բնավորությամբ, և որ շախմատային պայքարի գաղտնիքները հնարավոր չէ ճանաչել առանց մարդու, նրա սպորտմեթոդների, անհատական առանձնահատկությունների և դրդապատճառների: Շախմատն, ըստ նրա, երկու անհատականությունների, ինտելեկտների պայքարն

է: «Շախմատային տախտակի վրա պայքարում են մարդիկ և ոչ փայտե ֆիգուրներ», – ասում է Լասկերը (4 էջ 6):

Ա. Ալյոխինը զարգացրեց շախմատում մրցակցի հոգեբանական առանձնահատկությունների կարևորության մասին Լասկերի միտքը: Շախմատիստների՝ Ալյոխինի կողմից կազմված բնութագրիչները մրցակիցների բազմակողմանի ուսումնասիրման արդյունք են:

Ալյոխինը նշում է. «Շախմատի միջոցով ես ձևավորել եմ իմ բնավորությունը: Շախմատը, նախ և առաջ, սովորեցնում է լինել օբյեկտիվ: Շախմատում կարելի է դառնալ մասնագետ միայն գիտակցելով սեփական սխալներն ու բացթողումները»:

Որոշ հոդվածներում նա կանգ է առնում քայլի վերլուծության ժամանակ մտածողական գործընթացների առանձնահատկությունների ուսումնասիրմանը: Մասնավորապես փակ աչքերով խաղի մասին նա գրում է. «Խաղացողը չի փորձում մտքում պատկերացնել ամբողջ տախտակը սև և սպիտակ վանդակներով և ֆիգուրներով, ինչպես ենթադրում են անտեղյակ մարդկանց մեծամասնությունը: Նա միայն հիշում է որոշակի բնութագրական քայլ, տախտակի մի մասի կառուցվածքը» [4, էջ 14]:

Հոգեբանական տեսանկյունից վերոհիշյալ պնդումը չափազանց կարևոր նշանակություն ունի, քանի որ այն ինքնադիտման ճանապարհով բացահայտում է շախմատիստի մտածողության ողջ ընթացքը և կառուցվածքը: Այն ևս մեկ անգամ ապացուցում է Բ. Բյուսենֆելդի շախմատիստների մտածողության ակնառու բնույթի մասին դրույթը:

Շախմատիստների հոգեկան վիճակների հետաքրքիր տվյալներ ենք հանդիպում Ռ. Շալյմանի և Կ. Կորրեի աշխատություններում: Կորրեն մանրամասն կանգ է առնում շախմատային ոճի ձևավորման հարցերի վրա:

Խորհրդային հոգեբանները ուսումնասիրել ու զարգացրել են մրցումների ին հոգեբանական նախապատրաստման՝ Լասկերի և Ալյոխինի կողմից առաջարկված մեթոդները: Այս առումով առավել հետաքրքրական է Մ. Բոտվիննիկի կողմից առաջարկված համակարգը, ուր կարող ենք հատկապես շեշտադրել.

1. մրցակցի անհատական հոգեբանական բնութագրիչների կազմումը,
2. խաղի ժամանակ օպտիմալ աշխատունակության վիճակի կառուցումը,
3. մրցմանը հոգեբանական տրամադրումը:

Շախմատային հոգեբանության զարգացման պատմությունը՝ սկզբնավորումից մինչ օրերս, մեզ առաջադրում է մի շարք կարևոր հիմնախնդիրներ, որոնց լուծմանն էլ պետք է ուղղվեն շախմատային հոգեբանության ժամանակակից հետազոտությունները:

Այժմ շախմատը իր զարգացման ամենահետաքրքիր շրջափուլում է, որն առավել արդիական է Հայաստանի Հանրապետությունում, քանի որ այն ձգտում է դառնալ շախմատային «գերտերություններից» մեկը: Սա անխուսափելիորեն բերում է շախմատային հոգեբանության՝ որպես գիտություն, զարգացման անհրաժեշտությանը, որն իր հերթին պահանջում է առավել արդիական խնդիրների լուծում: Եթե առաջ բավարարվում էին ռազմավարության ընդհանուր սկզբունքներով, ապա այժմ գիտական վերլուծությունն առավել հեռու տանելու միտումն է շեշտադրվում:

Ժամանակակից ուսումնասիրություններն առավել ուղղված են շախմատի տեսությանը, սակայն դուրս են թողնում շախմատային գործունեության մեկ այլ կարևորագույն օղակ՝ շախմատիստի անձը:

Շախմատիստի անձի ուսումնասիրման ոլորտում կատարվող առանց այն էլ սակավաթիվ հետազոտությունները մասնակիորեն ուղղվել են որոշման ընդունման և մտածողության գործընթացների ռացիոնալիզացիայի, ստեղծագործական մոտեցման խրախուսման հիմնախնդիրների լուծմանը, սակայն ամբողջովին ուշադրության կենտրոնից բաց թողել շախմատիստի անձնային առանձնահատկությունների, դրդապատճառային և հուզականային ոլորտների ուսումնասիրումը:

Շախմատիստի անձի համակարգային հոգեբանական ուսումնասիրումը անպայմանորեն ենթադրում է վերոհիշյալ որակների հաշվառումը նույնպես:

Հետևապես շախմատի և հոգեբանության խաչմերուկում առաջացած շախմատային հոգեբանության զարգացման ժամանակակից փուլի զարգացման հիմնախնդիրները կարելի է ձևակերպել որպես.

1. շախմատիստի կողմից որոշման ընդունման և մտածողության գործընթացների ուսումնասիրություն և արդյունավետության բարձրացման համակարգերի մշակում,
2. շախմատային գործունեության դրդապատճառային համակարգի ուսումնասիրում և զարգացման ծրագրերի կազմում,
3. շախմատիստի անձնային առանձնահատկությունների համակարգային ուսումնասիրում,
4. արտաքին միջավայրի խանգարող ազդակներից և մրցակցի հոգեբանական ճնշումից պաշտպանման մեթոդական ցուցումների մշակում անձնային համապատասխան առանձնահատկությունների հաշվառմամբ,
5. վերջապես, վերոհիշյալ բոլոր հիմնախնդիրների լուծման արդյունքների հիման վրա շախմատիստի նորացված և ամփոփ հոգեգրամայի կազմում և դրան համապատասխան անձնային հատկությունների ձևավորման և զարգացման հոգեբանական թրեյնինգային և խորհրդատվական ծրագրերի մշակում:

ՊԲԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Блюменфельд Б.** К вопросу о характере шахматного мышления. Шахматный листок. М., 1931, с. 280–282.
2. **Дьяков И., Петровский Н., Рудик П.** Психология шахматной игры. Москва, 1926, 136 с.
3. **Крогиус Н. В.** Возрастные различия интеллектуальных способностей. Самара, Изд-во Саратовского университета, 1972, 40 с.
4. **Крогиус Н. В.** Психология шахматного творчества. Москва, “Физкультура и спорт”, 1981, 183 с.
5. **Пушкин В. Н.** Эвристика – наука о творческом мышлении. Москва, Политиздат, 1967, 262 с.

ПРИКЛАДНЫЕ ПРОБЛЕМЫ ШАХМАТНОЙ ПСИХОЛОГИИ

АЙРАПЕТЯН ДАВИД

*Кандидат психологических наук,
помощник ректора Ереванского государственного университета*

В статье рассмотрено историческое развитие основных прикладных направлений шахматной психологии, а также представлены современные проблемы научных исследований этой области.

APPLIED PROBLEMS OF THE CHESS PSYCHOLOGY

HAYRAPETYAN DAVID

*Candidate of psychology,
The Assistant to the rector of Yerevan State University*

The article discusses the history of development of two main applications of the chess psychology. The first approach is the usage of the chess model in the study of the cognitive characteristics of the individual during the psychological researches, and second – usage of the psychological data during the chess trainings in purpose to increase the readiness, auto regulation, decision making of the chess players.